

3116

Պրոֆեսորներ քոյր  
յեղերների, միացե՛ք.

ԸՆԿ (Բ) ԿԵՆՏՐՈՆԵՆԸՆ ԿՈՄԻՏԵ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՉՈՒՆԵՎՈՐՆԵՐԻ ԽՄՐԵՐԻ  
ԸՇԽՏԱՆՔԻ ՄԵՍԻՆ

(Հասցասփած ՀամԿԵ (Բ) Ա.Նդրյեղեր-  
կոմի Բարուզարուրյան կողմից)

3K75

4-21

1928.

3K75

Պրոլետարներ բոլոր  
յերկրների, միացե՛ք

4-21

ԸԿԿ (Բ) ԿԵՆՏՐՈՆԸԿԸՆ ԿՈՄԻՏԵ 4-20 011

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՉՈՒՆԵՎՈՐՆԵՐԻ ԽՄԲԵՐԻ  
ԸՇԽԵՏՆԵՐԻ ՄԸՍԻՆ

(Հաստատված ՀամԿԿ (Բ) Ա.Գրյերկե-  
կոմի Բարեուզարության կողմից)

ԲԱ.Գ.ՈՒ—1928.

2010

20928 1/14



# ԿԱՆՈՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

ՉՈՒՆՆԵՎՈՐՆԵՐԻ ԽՄԲԵՐԻ ԱՅԽԱՏԱՆՔԻ  
ՄԱՍԻՆ

(Հաստատված Համ. ԿԿ (բ) Անդր-  
յերկրկամի քարտուղարության  
կողմից):

Կենտրոնի և Անդրկովկասի  
կուսակցական ղեկավար որդան-  
ները իրենց վերջումներով մի  
քանի անգամ ամենավճուհական  
կերպով շեշտել են, Վոր անհրա-  
ժեշտ և շատ մեծ ուշադրություն  
գարձնել չունեւորների մեջ տար-  
վող աշխատանքին: Ծիշտ և, այդ  
կողմից վերջ հաջողություններ

Баку. Тип. «Красный Восток» Бакполиграф.  
Карацхинская № 84.  
Главлит № 2024. Зак. № 5835. Тираж. 500.



5955-53

յեղել են, ըստյ տեղերում դեռ  
բավականաչափ աչքի ընկնող  
պահաս բաներ, թերություններ  
կան:

Այդ թերություններից մեկն  
այն է, վոր մինչև այժմ չի կա-  
նոնավորված չունևորների խմբ-  
բերի հետ տարվող աշխատանքը:

Անդրկովկասյան կուսակցա-  
կան կազմակերպությունները  
չունևորների խմբեր կազմակեր-  
պելու և այդ խմբերում աշխա-  
տանք կատարելու համեմատաբար  
քիչ փորձառություն ունեն. բայց  
այդքանն էլ շատ պարզ ցույց է  
տալիս, վոր դեռ տեղերում բավա-  
կանաչափ լավ չեն հասկացել  
չունևորների հետ կազմակերպ-

չական ու քաղաքական աշխա-  
տանք տանելու ձևերը: Չունե-  
վորների խմբերի հետ աշխատե-  
լու եյությունը պարզ չյուրաց-  
նելու պատճառով շատ դժվարու-  
թյուններ են առաջանում աշխա  
տանքում և սխալ ուղղություն  
տալիս աշխատանքին:

Այս բոլորի հետևանքով՝ կազ-  
մակերպությունների մի մասը  
չունեվորների ժողովն ու չունե-  
վորների խմբերն իրար հետ  
խառնում է: Իսկ կազմակերպու-  
թյունների մյուս մասը խմբերի  
աշխատանքին սխալ ուղղություն  
է տալիս, նրանց կոմբեդական կազ  
մակերպություն դարձնելով. կամ  
թե չունևորների խմբերը գործ-

նական աշխատանքում սկսում են խորհրդի, կոոպերացիայի վարչության դեր կատարել, և այլն:

Տեղի են ունենում և այսպիսի դեպքեր: Կուսակցական կազմակերպությունները լավ չպատկերացնելով, թե վորտեղ և ումնից են չունևորների խմբեր կազմակերպվում, թե ինչ պեսք ե լինի նրանց անելիք գործը, բոլորովին չունևորների խմբեր չեն կազմակերպել:

Այս բոլորն ի նկատի ունենալով ու չունևորների խմբերի հետ տարվող աշխատանքը լավացնելու համար, անհրաժեշտ ե ղեկավարվել հետևյալ կանոններով:

1. Վորտեղ, յերբ յեվ ինչպիսի պայմաններում են չունևորների խմբեր (գրուպպաներ) ստեղծվում

Այդ հարցերին լիուլի պատասխան ե տալիս ՎԵԿԱՊԵ-ի (բ) կենտրոնական Կոմիտեի կազմակերպչական բյուրոյի վորոշումը, վոր ասում ե. «Կենտրոնական Կոմիտեն առաջարկում ե ավելի վճռական կերպով ձեռնարկել չունևորների խմբեր կազմակերպելու գործին, այդպիսի խմբեր ստեղծելով այն գյուղերում, վորտեղ բջիջներ կամ դայրա կոմիտե կա: Չունևորների խմբեր կարող են կազմակերպվել խորհուրդներին, կոոպերացիայի վարչություններին ու ֆաբկոմներին

կից՝ հենց դրանց չունևոր անդամներից, բարորակներից, վորպեսզի գյուղի սակավակարող խավերի շահերն ավելի կազմակերպված կերպով ապահովեն վերոհիշյալ կազմակերպութիւնների աշխատանքում»:

Այս վորոշումը ցույց ե տալիս, վոր

1. Չունևորների խմբեր ստեղծվում են դայրախորհուրդների և գյուղխորհուրդների, ամեն տեսակ կոոպերացիայի, կոլլեկտիվ տնտեսութիւնների ու փոխոգկոմների կից, այդ ղեկավար որդանների անդամ չունևորներից, բարորակներից ու կուսակցութիւն և կոմսոմոլի անդամներից:

Ծանոթութիւն. — կոոպերացիայի վարչութիւններին և գյուղատնտեսական կոլլեկտիվ միացումներին կից գտնվող չունևորների խմբերի կազմի մեջ են մտցնվում խորհուրդների և վերատուգիչ հանձնաժողովների չունևոր անդամները:

2. Չունևորների խմբեր (գրուպպաներ) այնտեղ են կազմակերպվում, վորտեղ կուսակցական կազմակերպութիւններ կան կամ վորտեղ հնարավոր ե կուսակցական ղեկավարութիւն սահմանելը:

3. Չունևորների խմբերը գործնական աշխատանք կատարելու

ժամանակ վոչ մի դեպքուս  
չպետք է թույլ տալ իրանցով  
փոխարինել խորհուրդներին կամ  
այն դեկավար որգաններին, վո-  
րոնց կից իրանք են կազմա-  
կերպված:

4. Կուսակցական կազմակեր-  
պությունները պետք է վճառ-  
ական կերպով կոխով մղեն, վոր  
չունևորների խմբերի աշխա-  
տանքում կոմբեդական գործո-  
ղություններ չմտցնվեն:

Տեղերից հարցեր են տալիս.  
Թե կարո՞ղ են արդյոք այն չու-  
նևորները, վորոնք անդամ չեն  
գյուղի դեկավար որգաններին,  
բայց նրանց աշխատանքներին  
ակտիվ մասնակցություն են

ցույց տալիս, ներկա գտնվել  
չունևորների խմբերի նիստերին:  
Այդ հարցերին պետք է պատաս-  
խանել, վոր տեղական կուսկազմա  
կերպությունները պետք է ամեն  
կերպ աջակցեն, վոր նրանք ակ-  
տիվ կերպով դեպի չունևորների  
աշխատանքը քաշվին:

11. ՎճՐ կուսկազմակերպություն-  
ները պետք է դեկավարեն չունև-  
վորների խմբերի աշխատանքը  
յեվ ինչ հարցեր պետք է բնակվեն այդ  
խմբերի ժողովներում

Չունևորների խմբերի աշխա-  
տանքը միայն այն ժամանակ  
կարող է լավ, դրական հետևանք  
ներ տալ, յերբ նրանց վրա կու-

սակցական ղեկավարութիւնն լինի  
Կուսակազմակերպութիւններն  
իրենց ղեկավարութիւննը պետք  
է իրականացնեն՝

1. Ղեկավար որդանների կո-  
մունիստական ֆրակցիաների  
միջոցով.— այն ղեկավար որդան-  
ների, վորոնցից չունևորների  
խմբերն են կազմակերպված: Այդ  
դեպքում կոմֆրակցիաները կա-  
րող են ղեկավարութիւնն վերա-  
բերող անմիջական աշխատանքը  
դնել կուսակցութիւնն առանձին  
անդամների վրա (1—2 հոգու):  
Այդ ընկերները պարտավոր են  
խմբերի աշխատանքին ճիշտ ուղ  
ղութիւնն տալ, խմբերի ժողով-  
ներին քննութիւնն, յենթարկելու  
հարցեր, նշանակել, չունևորների.

խմբերի անդամներ հալաքել և  
այլն: Կոմֆրակցիաները նույն-  
պես ղեկավարում և ստուգում  
են ջոկած ընկերների աշխա-  
տանքը:

2. Կուսակազմակերպութիւն-  
ներն իրենց ղեկավարութիւննը  
պետք է իրականացնեն նույն-  
պես կուսակցական առանձին  
ընկերների միջոցով այն դեպ-  
քում, յերբ գյուղի ղեկավար որ-  
դաններում կոմֆրակցիա չկա:  
Կոմբջիջները, կուսկոմիտեաները  
պետք է ջոկված ընկերների  
հսկողութիւնն ու ղեկավարու-  
թիւնն ապահովեն:

3. Կուսակազմակերպութիւն-  
ները իրանց ղեկավարութիւննը

պետք է իրականացնեն չունե-  
վորները ի մթերը լայնորեն գյու-  
ղացիական անկուսակցական ակ-  
տիվի աշխատանքին քաշելու  
միջոցով, և

4. Չունևորների խմբերի ան-  
դամների հետ միասին այս կամ  
այն հորը անմիջականորեն  
քննելու միջոցով:

Չունևորների խմբերի ժողով-  
ներում քննության են առնվում  
չունևորների ;ահերին վերաբե-  
րող այն բոլոր հարցերը, վորոնք  
քննության պետք է դրվեն գյու-  
ղի ղեկավար օրգաններում: Այդ-  
պիսի նախնական քննությունն  
անհրաժեշտ է, վորպեսզի մի  
ընդհանուր ուղղվելուն մշակվե,

թե չունևորն ինչպես պետք է  
վարվի այս կամ այն հարցի վե-  
րաբերմամբ, թե ինչպես պետք  
է չունևորին հետ քաշել ունևոր  
խավերի ազդեցության տակից,  
և թե խորհուրդների, կոոպերա-  
ցիայի և ուրիշ կազմակերպու-  
թյունների ժողովներին չունե-  
վորին հետաքրքրող ինչ նոր  
հարց պիտի դնել:

III. Չունևորների խմբերի աշխա-  
սանքը պետք է չունևորների ու  
միջակների բլոկն աւուացնի

Չունևորների խմբերի վրա  
դրվող ամենալուրջ խնդիրներից  
մեկը՝ չունևորների ու միջակ-  
ների բլոկն ամրացնելն է: Այդ  
խնդիրն իրականացնելու համար

կուսասոցական կազմակերպություններն ու չունեւորների խումբերը պետք է բոլոր միջոցները գործադրեն, վոր չունեւորների խմբերի ժողովներում ընդունված բոլոր վորոշումները վոչ միայն չունեւորների շահերը պաշտպանեն, այլ և միջակների:

#### IV. Չունեւորների խմբերի խորհրդակցութեան մասին

Վեկտորի (բ) XV համագումարը հրահանգ է տվել ժամանակ առ ժամանակ գյուղերում ու վորտաներում (դայրա) չունեւորների խմբերի խորհրդակցություններ կազմել: Այդ խորհրդակցությունները նրա համար պետք է կազմել, վորպեսզի չունեւորները

նեւորների խմբերի կատարած աշխատանքի վործառությունը մեկից մյուսին անցնի: Բացի դրանից, այդպիսով զանազան կազմակերպությունների կողմից չունեւորներին սգնություն հասցնելու և նրանց տնտեսական նախաձեռնությունն ու ինքնագործունեւորությունը բարձրացնելու համար ձեռք առնվող միջոցներն ամենալավ կերպով կկապվեն իրար հետ:

Մեզ մոտ, Անդրկովկասում, չունեւորների խորհրդակցություններ կարող են տեղի ունենալ գյուղերում, թեմերում, դայրաներում ու գավառամասերում:

Գյուղական ու դայրայական խորհրդակցությունները դայ-

բայի ու գյուղի սահմաններում, տերրիտորիայում յեղած չունե-վորների խմբերի բոլոր չունե-նուր անդամների ժողովը և (խորհրդի, կոոպերացիայի վարչ-ություններին, կոլլեկտիվ տըն-տեսություններին ու փոխոգ-կոմներին կից չունևորական խըմբեր):

Ռայոնական ու գավառական խորհրդակցությունները կարող են յերկու տեսակ կատարվել.  
ա) խորհրդակցություն ընդհա-նուր ժողովի ձևով, կամ թե մի-այն ռայոնի կամ գավառի չու-նևորների բոլոր խմբերի ներ-կայացուցչություն, և բ) խոր-հրդակցություններ չունևորների խմբերի՝ ըստ աշխատանքի

առանձին ճյուղերի, որինակ՝ խորհրդակցություն կոոպերատի-վային կամ խորհրդային խըմ-բերի:

Չունևորների խմբերի խոր-հրդակցությունները վոչ մի դեպ-քում չպետք և պատահական բնույթ ունենան: Կուսկազմակեր-պությունները տեղերում անհրա ժեշտարար պետք և այնպես ա-նեն, վոր այդ խորհրդակցու-թյունները բջիջների ամբողջ մասսայական աշխատանքների, ինչպես և չունևորներին կազմա-կերպելու աշխատանքի սիստեմի մեջ մտնեն: Պետք և այնպես ա-նել, վոր նախ քան գյուղացիա-կան աշխատանքի ամեն մի լուրջ հարց դնելը՝ չունևորների խմբերի խորհրդակցություն տեղի ունենա: Այդ խորհրդակցություն ներում պետք և մշակել այն

մի կազմակերպութիւնն դառնալ: Ուստի այդ խորհրդակցութիւններէ կազմակերպողներ ու դեկավարողներ կարող են միայն կուսակցական կազմակերպութիւնները, — բջիջները, թեմկոմներն ու դայրակոմները լինել Այս կամ այն ուստի ուսակազմակերպութիւնն չլինելու դեպքում խորհրդակցութիւններէ ղեկավարութիւնը կարելի է դընել կուսակցութեան առանձին ընկերներէ վրա:

V. Գյուղասնեսական կոոպերացիայի յիվ գյուղասնեսական կալիկիսիվ միացումների չունելուական խմբերի մասին.

ՎԵԿԱՊԵ-ի (բ) XV համապուժարը գյուղի կուլտուր-կենցաղային և տնտեսական վերակա-

ուպման վերաբերմամբ վորոշումներ և կայացրել. այդ կողմից առանձին նշանակութիւն և ստանում չունեորական խմբերի աշխատանքը գյուղատնտեսական կուլիկտիվ միացումների ուղղութեամբ:

Սակայն հենց այդեղ ել հետ և մնում չունեորական խմբերի աշխատանքը, վոր պետք է մեծ չափով բացատրել գյուղում արտադրական գործերի (գրանց թվում և չունեորական տնտեսութիւններէ) կոոպերացումը զարգացնելու թուլութեամբ: Շատ դեպքեր կան, վոր վարկային, հողաշինարարական ու մեքենայական ընկերութիւններին կից բոլորովին չունեորներէ խմբեր չեն կազմված, ինչպես և կուլիկտիվ տնտեսութիւններում և այլն: Այդ հանգամանքին ան-

չուշա պետք է այն աղավաղումներն առաջացներ կուսակցական քաղաքականութեան մեջ, ինչպիսին մատնանշել է կուսակցութեան XV համագումարը, որինակ, — չունևորներին թույլ կոտպերացնելը, կոտպերացիայի ղեկավար որդաններին մեջ կուլակներ ներս խցկվելը, դեպքեր, վոր գյուղի վերին խավերին են գյուղատնտեսական գործիքներ հասցրել, վարկն ուղիղ չեն բաշխել, դեպքեր, վոր չունևորական ֆոնդերն ուրիշ նպատակներով են գործադրվել «սուտ ընկերութեաններ» են գոյութեան ունեցել և այլն:

Այս բոլորն ի նկատի ունենալով՝ անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել չունևորներին աշխատանքն այդ ճյուղում ամբապնդելու և ծավալելու համար:

2013

« Ազգային գրադարան



NL0035948

3116

151

420